Եղիշե Չարենց

Դուրսը քամին թափառում է, անմխիթար դեգերում

Դուրսը քամին թափառում է, անմխիթար դեգերում,
Չի՛ մոռանա պոետը քեզ, չի մոռանա քո հեռուն:

Նա մենակ է ու ծեծում է փակ դռները հիմա նա.
Քեզ մոտ կգա, երբ էլ-ոչ-ոք իր դռները չբանա:

Ո՛ւ ո՛ւ... նվոցը աշնան քամու, որպես լացը ջութակի.
Կրկին կգա, քո մենավոր պատուհանը կթակի:

Կես գիշերին ո՞վ կբանա իր դռները քամու դեմ.
Դու գրկաբաց ինձ կընդունես, դու կընդունես, ես գիտեմ:

Լո՛ւռ... կուչ եկավ աշնան քամին պատերի տակ անկյունի.
Հոգնած սիրտս քո մեղավոր զգվանքներում կքնի...
1916